ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆԸ

Հարգելի ընկեր խմբագիր,

1973 թ. հունիսին ՀՍՍՀ Գիտությունների ակադեմիայի Հնագիտության և ազգագրության ինստիտուտի մարդաբանական լաբորատորիայի արշավախմբի աշխատանքների ժամանակ Երևանի մոտակայքում, Կարմիր բերդի պարսպի հյուսիսային անկյունում, մուտքից ոչ հեռու հայտնաբերվեց տուֆե մի գորշ քար՝ վրան սեպանշաններով փորագրված արձանագրություն (տե՛ս նկարը)։ Քարի վրա փորագրված է 90 նշան, նրա երկարությունն է 1 մ 55 սմ, բարձրությունը՝ 79 սմ, հաստությունը՝ 75 սմ։ Մակերեսը անհարթ է, տեղ-տեղ քայքայված, հատկապես ձախ ճակատային ստորին հատվածը հողմնահարվել է և շերտերով անջատվում է։

Քարը գրված է ոչ թե վաղ միջնադարում կառուցված կրաշաղախով պատի, այլ ավելի հին՝ կիկլոպյան անշաղախ պատի շարվածքում։

Հրապարակման հանձնելով այդ քարի լուսանկարը, մենք ցանկանում ենք մասնագետների ուշադրությունը հրավիրել նրա արձանագրության վրա, որոշելու համար, թե ինչ լեզվով է գրված այն և արդյոք ուշ ժամանակների գործ չէ։

Հ. ԱԶԻԶՅԱՆ